ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Ի ՆՊԱՍՏ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(*Տար. տես.* 1919 *թգմ. էջ* 293)։

ԴԱՏԻԿ (*ի հն. Տառիկ*) *ինքնագլուխ գաւառին համար կը գրէ* (*եր.* 180)*. «Են ի սմա գիւղօրէք Քրդաց և Հայոց, որոց մոռացեալ զլեզուն հայկական՝ խօսին քրդերէն. ուստի և օտարք կարծեն զնոսա լինել, կամ բռնեն ընդ քրդոս, այլ չեն»։*

ՄՈՒՇ (*քղք.*) *բնակիչք սորա տունք* 8,000 *ըստ մեծի մասին քուրդք, յառաջագոյն բազմութիւն էին ի նմա Հայոց, այլ այժմ սակաւք մնացին ի* 5 *թաղս։ Իսկ բնակիչք հայ գիւղօրէից յոյժ նուաղեալ են, որպէս Խասացեղ՝ որ երբեմն* 400 *տունք էին, և Հացիկ՝ որ ի քրդաց կոչի Խասիկ, ուր է եկեղեցի և գերեզման Ս. Մեսրոպայ. յայս եկեղեցի երդնուն մինչև ցայսօր քուրդք և Եզիտիք շուրջանակի բնակեալք յերդմունս իւրեանց՝ ասելով. Զխարարել Խասիկ. և զերեն պարզես իսկ»։ Թէպէտև Ինճիճեան այս քուրդերուն հայ ըլլալու մասին լռած է, բայց մէկ կողմէն անոնց յարգանքը դէպ ի Հայոց եկեղեցական սրբութիւնները, և միւս կողմէն ալ դէպ ի Հայերը ունեցած բարեկամութիւնն և ատելութիւնը առ տաճիկս՝ յայտնի նշան են, որ թէ Մշոյ և թէ Խութի* 25 *գիւղօրէից քուրդ ազգաբնակութիւնն իսկ, այսպէս նաև Եզիտիք առ հասարակ Հայոց ազգակից էին յառաջագոյն, կամ լաւ ևս Պաւղիկեան-Թոնդրակեցիք։*

Հմ. Ա. եր. 113-119*. ճառելով* ՊԱՅԱԶԻՏԻ *ընդարձակ նահանգին վրայ, բաժնուած հետևեալ հինգ գաւառներուն, Պայազիտ, Տիատին, Խամուր, Նախիա կամ Նախին, Ալաշկերտ, — յորում է և Խալի-եազի, — կը գրէ. «Բնակիչք այսր նահանգի կամ փաշայութեան՝ բաց ի Հայոց են զանազան ցեղք Քրդաց՝ կոչեցեալ Սիբըկցի, Մանըքցի, Հազարցի, Պատըլցի, Բեսեան են, բայց առ հասարակ միանգամայն կոչին Սըլիվանցի, վասն գաւառին որ առ նոսա Սըլիվան կոչի։ Պէկք ամենայն գաւառացն Պայէզիտոյ են քուրդք, բայց ի ժողովուրդս գտանին և Եէզիտիք»։ Ապա կը նշանակէ* (*եր.* 114) *Պայազիտ քաղաքի բնակչութիւնը, տունք իբր* 5,000*, այլ ըստ մեծի մասին Քուրդք. և միայն իբրև* 700 *յազգէս Հայոց։ Տիատին՝ տունք իբր* 500*, ըստ մասին յազգէս Հայոց, և ըստ մասին ի Քրդաց։* (*Եր.* 116)*. Ալաշկերտ գաւառ, որ լի է գիւղօրէիւք իբր* 500*, բնակեալ ի Հայոց և ի Քրդաց, որոց ցեղ կոչի Սըլիվան։ Թօփրագ գալէ՝ տունք իբր* 1300*, որք ըստ մեծի մասին են Քուրդք, իսկ յազգէս Հայոց սակաւք։* ԽԱՄՈՒՐ (*բերդաքաղաք*) *տունք իբր* 1,000*, ըստ մեծի մասին ի Քրդաց, և ըստ սակաւուց ի Հայոց։* (*Եր.* 119)*. Բաղէնց* (*վիճակ*)*. «Են ի սմա գիւղօրէք* 30*, ոմանք Քրդաց, և ոմանք ի Հայոց»։*

ԲԱՍԵՆ (*վերին*)*. «Այս գաւառ, — կը գրէ Ա. եր.* 87*, Ինճիճեան. — Լի է գիւղօրէիւք և շինօք Հայոց և Քրդաց՝ ըստ մասին դարձեալ յազգէս Հայոց։ Զքուրդս Բասենոյ՝ Քեաթիպ Չէլէպին Բեսեան անուանէ՝ իբրև անուն ցեղին։ Հասանգալէ գիւղաքաղաք մեծ և գլխաւոր համօրէն գաւառին Բասենոյ. Բնակիչք սորա են իբր* 1700 *տունք, ըստ մեծի մասին Թուրք, և սակաւք ի Հայոց»։*

Առանց երկբայութեան է, թէ ԺԶ. դարէն մինչև ցկէս ԺԷ. դարուն վերոյիշեալ գաւառներու և քաղաքներու ազգաբնակութիւնքն առաւելապէս Հայոց կը պատկանէին, ըստ որում կարելի է ստուգել յիշեալ դարու պատմիչներէն և աշխարհա-

© National Library of Armenia

գրութիւններէն, և թէ հետ գնտեէ թիւրքեր և Քիւրդեր բռնացեր և տէր դարձեր են Հայոց անթիւ անհամար գիւղերուն և բազմաբնակ աւաններուն, ի հարկէ կամ տարագրելով կամ կոտորելով և կամ իրենց դեռին դարձնելով զանոնք։ Մինչև հոս ըսուածներէն տեսանք մերձաւորապէս թրքացած հայերու թիւը։ Եթէ վերոյիշեալ գաւառներուն մէջ բնակած քրդական ցեղերու ազգաբանական և տեղագրական լուրջ վիճակագրութիւն մ՝ալ ըլլուի ցարդ եղածներուն վրայ, ես կարծեմ թէ անկէ ոչինչ նուազ ըլլալու է քրդացած կամ քուրդ համարուած հայերու թիւը։ Արդ՝ այսպիսի ուսումնասիրութեան նիւթ տալու համար թէ՛ մերայոց և թէ՛ օտարազգի հետազօտողներուն զանազան տեսակէտերով կարեւոր կը համարիմ համառօտիւ մէջ բերել հոս Հ. Ղ. Ինճիճեանի այնքան հրմտութեամբ և սրատեսութեամբ Քիւրդերու մասին ըրած տեսութիւնքը։

«ՄԵԾ ՀԱՅՔ» խորագրի ներքև՝ յետ նշանակելոյ (Հտ. Ա. եր. 51) անոր զուարճալի դիրքն և օրը և հրաշալի արգաւանդութիւնը, կը յարէ. «Բնակիչք նորա են զանազան ազգք, բայց բազմագոյնքն քան զամենեսին և գլխաւոր ժողովուրդք՝ են Հայք և Քուրդք. մինչև այս աշխարհ՝ բնիկ սահմանի Քրդաց կարծի այժմ ի տասկաց, և մեծ մասն Մեծին Հայոց որ ընդ տեղոյս ամանեանց՝ յանուն նոցա Քրդաստան կոչի, սկսեալ գրեթէ ի գետոյն Երասխայ՝ մինչև ի հարաւային եզր Մեծին Հայոց և անդր ևս, յորում են փաշայութիւնն Վանայ, առեալ միանգամայն զԲաղէշ, զՄուշ, փաշայութիւն Պայէզիտոյ, Տիարպէքիրոյ, և զման ինչ փաշայութեան Էրզրումայ, և Մալազկերտ և Տուժիկ։ Եւ այսպէս յայժմս ժամանակիս յասելն Քիւրտիստան՝ պարտ է իմանալ զմեծ մասն Մեծին Հայոց։ Քեռթիպ Զէլէպին զանահման Քիւրտիստանայ դնէ ‖ սկսեալ ի Հիւրմիզայ մինչև ի սահմանս Մալաթիոյ և Մարաշոյ... որոյ հիւսակողմն է Մուսուլ և Արբէպի իրազն ‖։

Այս կը մեկնէ (Ինճիճեան) Քուրդ անուան ծագումը, ըսելով. «Թուի ածանցեալ ի հին հայկական անուանէս Կորդուք կամ Կորդ. ուստի չէ՝ անուն պարսկական, որպէս ոմանք դնեն, առ որս Քիւրդ կամ Կիւրտ նշանակէ կորովի կամ ուժեղ. զի Կորդուաց անուն ի հնումն ոչ մի միայն գաւառ, այլ ընդ լայնարձակ սահմանս տարածեցաւ, որպէս ունիս տեսանել ի Հին Հայաստան»։ Այս կը դնէ Քիւրտերու բաժանումն՝ և անուանակոչութիւնքը ըստ գաւառաց և նահանգաց՝ ըսելով. «Առ հասարակ յերկուս բաժանի ազգ Քրդաց՝ ի գիւղաբնակ և ի վրանաբնակ։ Գիւղաբնակք են որք ունին զհաստատ բնակութիւն ի գիւղս և ի քաղաքս. իսկ վրանաբնակք են որք չունին զհաստատ բնակութիւն, այլ աստ և անդ չու առնեն, յայն սակս ի լեզու Քրդաց կոչին Ռուռա, որ նշանակէ Զու առօղ... բնակութիւն սոցա է ընդ վրանօք։

Անուանք գիւղաբնակաց ըստ մեծի մասին առեալ լինին ի գաւառաց՝ յորս բնակին, զոր օրին. Խոռոցի, Մարագկերտցի, Մշեցի, Սասունցի, Սուռնցի, Բաղիշեցի, Հաքեարի, Ճզիրէ, են։ Առեալ լինին նաև յանուանէ նահանգաց ինչ՝ զորս ինքեանք սահմանեալ ունին ի մէջ իւրեանց, և ոչ օտմ. տէրութիւնն. զոր օրինակ սահման փաշայութեան Պայէզիտոյ՝ յորում են Պայէզիտ, Ալաշկերտ, Տիատին, Բաղնոց, և շրջակայ սահմանք կոչին ՍՐԼԻՎԱՆ, որ չէ գործածական առ օսմանեանս, և բնակեալ Քուրդքն ի նմա միով անուամբ կոչին ՍՐԼԻՎԱՆՑԻՔ։ Նոյնպէս և սահման խանին Բաղիշոյ, յորում են Բաղէշ, Մուշ, Սասուն, Ջրբրգան, են, կոչին միով անուամբ Սուսան Ռոշկան, և բնակեալ քուրդք ի նմա՝ ՌՈՇԿԱՆՑԻՔ կամ Ռոշկցիք։ Ջերկոցունց անուանց ևս՝ որք կացուցանեն իրրև ցեղ իմն որոշեալ ի մէջ Քրդաց, ասացին մեզ սերեալ գոյ ի հին նախարարացուն ցեղից Հայոց, զԱյէվանցիս՝ ի Այկուենաց, և զՌոշկանցիս ի Ռշտունեաց, այլ այս չէ մեզ յայտ. միայն այս ինչ յայտնի է, զի ի տեղիս տեղիս Հայք խառնեալ կան ընդ Քուրդս, և ընդ նոսա միանգամայն զմի ժո-

© National Library of Armenia

ղովուրդ կացուցանեն. իսկ ի բազում տեղիս խառնեալ կան ընդ զօրս նոցա, և են երևելի զօրապետք և քաջագործք ի մէջ Քրդաց։

Վրանաբնակ Քուրդք կոչին սովորաբար ո՛չ յանուն տեղեաց, այլ յանուն ցեղից՝ որք են բազումք. զոր օրինակ՝ Բանձրձնարցի, Սիհանցի, Բատրքցի, Շարխիանցի, Սիրկցի, Հասնանցի, Բարադկցի, Մըմանցի, Օմըրկցի, Շեղբըղըցի, որք ի գարնան սփռին ի լերինս Մշոյ և այլոց գաւառաց Մեծին Հայոց. Ռիշվանցիք կամ Ռիշվանք ի Փոքր Հայս, որք բաժանեալ են ի 12 տոհմս. Մըլանցի կամ Միլլի, որ է ցեղ մեծ, զօրաւոր և ապստամբ, որ սովորաբար օթևանի ի կողմանս Միլլիարայի։ Է՛ ի նոսա ցեղ ինչ կոչեցեալ Մանըքցի, զոր ի Մամիկոնեանց առնեն սերեալ, որպէս և զՄէնդէքլի ցեղն՝ ի Մանդակունեանց։

Լեզու նոցա առ հասարակ է կրկին. մին է բնիկ Քրդաց, իսկ միւսն կոչի Զազա, որ տարբեր է յոյժ յառաջնոյն, մինչև ոչ իմանալ մին զմիւսոյն. այս լեզու ձգի ի Տուժիկ, ի Խնուս, ի Բալու, ի Ճապըղջուր, ի Վարդոյ, նաև յարևմտեան գիւղօրէս ինչ Մշոյ։ Սոքա գիտեն նաև զլեզու Քրդաց, զի այն է հասարակաց, որ է խառնեալ իմն ի զանազան լեզուաց, բայց տիրապէս ածանցեալ ի ռամկական լեզուէ Պարսից. այլ սոյն այս լեզու Քրդաց՝ ունի զանազան գաւառական լեզուս, որպէս և առ մեզ են լեզու Ագուլեցւոց, Պելանցւոց, Ճիւղայեցւոց, ևն։ Կրօնիւ են մահմէտական՝ ըստ ծիսին Շաֆիի։

Վրանաբնակ Քուրդք են ազգ՝ որք ոչ զգան երբէք զխստութիւն ձմերայնոյ, այլ միշտ վայելեն զքաղցր եղանակ գարնան. զի ի ձմերան սփռին ի ջերմ տեղիս յանապատին Պաղտատու առ ջրով՝ ուրանոր ոչ ձիւնէ, եղեգամբ որմապատելով ըզվրանս իւրեանց. իսկ յամարայնի չուեն ընդ արևու ի հիւսիսակողմն ի Մեծ և ի Փոքր Հայս... սփռին նաև ի կողմանս Փայասայ և Անթաքեայի, ի Փոքր Ասիա... Արուեստք գիւղաբնակաց ըստ մեծի մասին է երկրագործութիւն. իսկ վրանաբնակաց են անասունք իւրեանց, որք բերեն նոցա ի կերակուր՝ կաթն, կոգի և պանիր, յորոց զաւելորդն վաճառեալ՝ հոգան նոքօք զպիտոյս հանդերձից իւրեանց.... Եւ բազումք ի ցեղից անհաշտ թշնամիք են միմեանց, ստէպ պատերազմ տուեալ ընդ միմեանս» ևն։

Անտարակոյս՝ Խնճիճեանէն վերջ, մանաւանդ վերջին 20–30 տարիներու մէջ շատ աւելի կատարեալ ուսումնասիրութիւններ եղան թէ՛ եւրոպացի և թէ՛ ազգային հետախոյզներու – յատկապէս ռուսահայ մասնագէտներու ձեռքով, – բայց Խնճիճեանէն արտայայտուած ինչ ինչ կէտերը մեզ համար անգին արժէք ունին, որպիսիք են, Ա. Աւկէ մէկ դար յառաջ Մեծ Հայքի յիշեալ նահանգներու և գաւառաց հայ և քիւրտ ազգաբնակութեան մէջ յաջորդաբար պահուած աւանդութիւնը, թէ Սըլիվանցի Քիւրտերը՝ Սըկունեաց, Ռուշկանցիք՝ Ռըշտունեաց, Մանըքցիք՝ Մամիկոնեանց, և Մէնդէքլի ցեղը՝ Մանդակունի նախարարազուն ընտանիքներէն, և կամ այն նախարարութեանց մէջ բնակող և յարամնացող Հայերէն սերած ըլլան։ Խնճիճեան որչափ որ ալ պատմական փաստեր չունի ժողովրդական այսպիսի աւանդութեան, սակայն ազգագրական տեսակէտով անոր ըրած դիտողութիւնները, այսինքն ի տեղիս տեղիս Հայերու և նստողական Քիւրդերու ի միասին բնակակցութիւնն և մի միայն ժողովուրդ կազմելը մէկ կողմէն, և միւս կողմէն ալ զանազան տեղերում քուրդ զօրքերու մէջ հայ քաջարի զօրապետներու գոյութիւնը՝ մի մի զօրեղ փաստեր են։

Բայց առնցմէ աւելի դրական, և հետևաբար՝ եզրակացուցիչ են, ըստ իս՝ հետևեալքն. Նախ և առաջ յիշեալ գաւառներուն մէջ հաստատուն բնակութիւն ունեցող Քիւրտերն, ինչպէս և Հայերը, ի բաց առեալ կրօնական տարբերութիւնը, գրեթէ ազգագրականօրէն մի և նոյն կենցաղն և արուեստը կը վարեն դարեր անընդհատ, այսինքն երկրագործութեամբ և տնարար

© National Library of Armenia

արուեստներով կը պարապին։ Երկրորդ՝ ինչպէս Հայերը՝ քրտերէն, այսպէս ալ Քիւրտերն հաւասարապէս հայերէն ևս կը խօսին։ Դարձեալ չնայելով որ թէ՛ Հայերն և թէ՛ գիւղարնակ Քիւրտերը թէպէտ և հաւասարակ քրդերէն ևս գիտեն, բայց երկուստեք անոնց խօսած յատուկ բարբառն է Զազա կոչուածը, զոր ո՛չ միայն ի Մեծն Հայս եղող վրանաբնակ Քիւրտերն այլ նաև Միջագէտքի ընդհանուր քիւրտ ցեղերը չեն հասկնար։ Մինչև ցայսօր ոչ հետախոյզներէն և ոչ ալ ի բանասիրաց մէկը կրցած է ցոյց՝ տալ սոյն գաւառաբարբառին ինչպէս և զանի գործածող ազգաբնակութեանց ծագումը։ Մ. Վիվիէն Դը Սէն Մարտէն[1] այսպէս կ'արտայայտուի. «Ce nom, qui paraît s'appliquer à une grande division ou à une branche de la nation Kurde, plutôt qu'à une tribu proprement dite, désigne communément *un dialect de la langue Kurde* répandu à l'O. du lac de Van dans le bassin du Mourat-tchaï (Arménie Kurde)»։ Նոյնը, յիշեալ գործի Գ. Հատորին մէջ, եր. 233, կը փորձուի մատնանշել նաև ծագումը Զազա լեզուին, այսպէս. «La Zaza est le dialecte des Kurdes de l'Arménie, au pourtour du lac de Van et dans le bassin du Mourat-tchaï; *il est mêlé d'arménien,* et doit contenir encore quelques restes de *l'anciénne cappadociénne*»։ Սակայն ես պիտի ըսեմ, որ կապադովկեան հին բարբառը բնաւ գործ չունէր և չէր ալ կրնար ունենալ ոչ ԺԷ–ԺԸ. դարուն Մեծ Հայքի յիշեալ գաւառներում բնակող Քիւրտերուն և ոչ ալ Հայերուն հետ, քանի որ մանաւանդ ինքն իսկ, անոնցմէ դարեր յառաջ արդէն անյայտացած էր։ Հետևաբար՝ աւելի ճշմարտանման կը լինէր ըսելը՝ թէ և՛ Կորդուաց հին լեզուի մնացորդներ. վասն զի Քուրդ անունն իսկ Կորդ կամ Կորդուքին հոմանիշ է՝ թէ՛ լեզուական և թէ՛ աշխարհագրական տեսակէտով։ Դարձեալ դժուար է որ Զազայերէնն՝ ընդհանրապէս ծանօթ քիւրտ լեզուին գաւառաբարբառ մ'ըլլայ, քանի որ մանաւանդ Մեծ Հայքէն դուրս ապրող Քիւրտերն իսկ զանի չեն հասկնար մէկ կողմէն, միւս կողմէն ալ սա հասարակօրէն ծանօթ քրդերէնի տարրերքներ չունի իր մէջ. և հետևաբար դուրսէն չի կրնար ներմուծուած ըլլալ յիշեալ գաւառներուն ազգաբնակութեանց մէջ։ Ուստի իմ կարծիքով կամ Սասնոյ, կամ Մշոյ և Խնուսի ժողովրդեան բնիկ, այսինքն է՝ հայ գաւառաբարբառի մը, — յորում Զ տառի գործածութիւնն յաճախեալ էր, — վրայ կամայական յերիւրանք մ'էր, այդ ազգաբնակութեանց կրօնական ու քաղաքական միտումները պարտկելու համար օսմանցիներէն։ Այո՛, ինչպէս Համկլայի և Այնթապի մի քանի գիւղերու թրքացած Հայերն, այսպէս և յիշեալ գաւառներում զազա լեզուն գործածող Քուրդերը՝ կէսկէսներ էին հաւանօրէն, այսինքն՝ ըստ տեղւոյն և ըստ պատեհին մերթ մահմէտական ծիսակատարութեամբ ապրիլ կը կեղծէին, օսմ. տէրութեան ծանրաբեռնութիւններէն ազատ մնալու համար։ Եւ Հ. Փ. Բ. Լինչ[2], որուն ծանրակշիռ հեղինակութիւնն արդ ամենուն ծանօթ է, կը թուի հաստատել մեր կարծիքը։ Սա խօսելով Մեծ Հայքում հաստատաբնակ Քիւրտերու և անոնց գործածած լեզուի մասին կը գրէ (Բ. Հտ. եր. 393). «Օտար ժողովուրդ մը՝ որոնք դասակարգուած են իբր Քուրդեր, բայց կը խօսին Զազա կոչուած գաւառաբարբառը մը. և որոնց մեծամասնութիւնը կը դաւանին ազատ կրօնք մը, որ է ընդ մէջ քրիստոնէութեան և իսլամութեան։ Ասոնք կը կազմեն ժողովրդեան մեծամասնութիւնը Հայաստանի լեռնագաւառաց մէջ», ևն։

Արդ՝ սոյն տեսակ ընտանի և զազայերէն խօսող Քրդաց թէև յիշեալ գաւառաց

1. Տես Diction. Géogr. T. 7eme. Paris 1895. p. 517.

2. *Armenia, Travels and Studies* by H. F. B. Linch. In Two Volumes London, 1901.

© National Library of Armenia

մէջ՝ կը հասնի 189,000–200,000 հազարի, առանց հաշուելու գզըլպաշ Քուրդերն, որոնք նոյնպէս քրիստոնէութենէ ինչ ինչ բաներ ընդունած են կը յարգեն, և են բարեկամ Հայոց. և վրանարնակները՝ որոնք հաստատուն կայան ունեցած չեն ի Մեծ Հայս։ Այս մահմետականացած Քիւրտերն, — այսպէս նաև Եէզիտիք, — որոնց թիւը 55–60 հազարի կը հասնի, ատի մահմէտական անհանդուրժող կրօնքի ազդեցութեամբ, անտի ալ Օսմ. նենգաւոր տէրութեան քաղաքական գրգռութիւններով է որ հետզհետէ թշնամական դիրք բռնեցին հանդէպ Հայոց. սակայն և այնպէս՝ տանելի էին։ Սուլթան Համիտի հայահալած քաղաքականութեամբ և Համիտական զունդերու կազմակերպութենէն վերջ է որ անոնք մոռնալով իրենց բարի դրացութիւնը՝ այնքան աղիտաբեր եղան Հայերուն համար. հետևաբար՝ մեծ յոյս կայ որ անոնք մէկ կողմանէ օսմանեան անարարոյական տէրութեան անկմամբ, և միւս կողմէն ալ Հայ Հասարակապետութեան վերակազմութեամբ և կրթութեան տարածումով՝ ճանչնան իրենք ևս — ինչպէս երբեմն թրքացած հայերն — իրենց վաղեմի ազգակցութիւնը, և յարին Հայ ազգին և տէրութեան, դիտելով որ բռնութեամբ միայն անկէ հեռացած են, իսկ այսուհետև միանգամ ընդ միշտ խորտակուած է այդ բռնութիւնը, և թէ ալ բոլորովին ազատ են հետևելու քաղաքակրթութեան, որը կարող է զիրենք տանիլ դէպ ի երջանկութիւն։ Եւ յիրաւի, եթէ թամիտ թիւրքը միայն սրով և եաթաղանով կրցաւ դարձնել Ասիոյ և Բալկանի այնքան քրիստոնեայ ժողովուրդները, որոնք ոչ միայն իրրև ազգ՝ հակոտնեայ կը հանդիսանային Մոնգոլին, այլ և իմացականապէս զինքը կը գերազանցէին, Հայք՝ արուեստից և լուսաւորութեան ջահը ունելով ի ձեռին ինչո՞ւ չպիտի կարենան ձգել իրենց նախապէս ցեղակից և բնակակից եղող՝ բայց հոգէն խորթացած յիշեալ ազգարնակութիւնները, որոնց մէջ դեռ կենդանի են պապենական աւանդութիւնք[1], և մերձաւոր ապագային՝ արիւնն և գիտակցութիւնն իսկ պիտի պահանջեն զայն, ինչպէս նաև լաւագոյն կենաց հրապոյրը։ Ժամանակաւ թրքացած Ցոյներու վերադարձի կոչն առ տէրութիւնն Ցունաց, եթէ ստոյգ է, թող՝ օրինակ ըլլայ խորթացած Հայերուն ալ։ Այլ այս բանիս աջողութիւնը Հայ Հանրապետութեան բրնելիք ճարտար քաղաքականութենէն, և հայ քարոզչաց անձնուէր աշխատութենէն կախուած է։

Իսկ մեր տեսութիւնը ամփոփելով, կրնանք ըսել, թէ այսպէս կամ այնպէս՝ Ց. Ա. Տէրվիշեանի 4,550,000 հաշուած հայութենէն դուրս՝ ունինք 800,000էն մօտ 1,000,000 խորթացած հայ զանգուած մ'ալ, որոնք կ'ապրին դեռ, նամանաւանդ կրկնակի իսկ բազմացած ըլլալու են ըստ ինքեան 200 տարիներու մէջ, Մեծ Հայքի և Փոքր Ասիոյ գաւառներու Լազ, Ցոյն, Թուրք և Քուրդ խառնարանին մէջ. որոնցմով կը կազմուի համաշխարհի Հայութիւն մը՝ բաղկացած մերձաւորապէս 5,550,000 անձերէ. որոնք համախմբուելով ի մի, բաւական են ոչ միայն լեցնելու նոր Հայաստանը, այլ և Ցանիկ ազգութեան գրեթէ կրկինը լինել թուով։

Իրաւ է՝ որ այսպիսի ազգային համախմբումի մը, այս ժամուս շատ դրժուարին պիտի երևի բազմաց, բայց ըստ իս անկարելի չէ բնաւ, քանի որ մանաւանդ Մայր Հայաստանի ներկայիս գերագոյն պահանջը մէկ կողմէն, միւս կողմէն ալ Հայոց համազգային Հանրապետութիւնն և հայրենիքի վերածնութեան կազմակերպիչ

---

1. Եւ իրոց այսպիսի կենդանի աւանդութեան իրրև խօսուն օրինակ մ'ալ կը պատմէ մեզ պատերազմէն առաջ ի Տրապիզոն գտնուող մեր միաբան Հայրերէն մին՝ հետևեալ կերպով. այսինքն քարեկամանալով Համշէնցի ծեր իմամի մը հետ. օր մը, կ'ըսէ նա, երբ հայերէն և Քրքերէն ինչ ինչ բառերու ծագման մասին կը խօսէինք, Հայերը առաջիկներէն առած ըլլալու են, նա այսինքն թրքացած իմամն, իսկոյն վրայ բերաւ. Ո՛չ Փափազ էֆէնտի, առաջիկները՝ մեզմէ առած են։ Եւ այս ըսելով՝ կ'աւելցնէր սա, թէ՝ իր պապերը հայ էին ազգաւ։

© National Library of Armenia

ընկերութիւնք իսկ անհրաժեշտ կը դատին զայն, և ամէն ջանք կը թափեն առ այն։ Եթէ Արարատեան Հանրապետութեան անկախ յայտարարուելու լուրը միայն բաւական եղաւ այսօր այնքան խանդավառել ի սփիւռս ազգաց ցրուած հեռաւոր հայ գաղթականները, կրնանք գուշակել, թէ վաղը ինչպիսի՜ հայրենաբաղձութեամբ ելեքտրականացած՝ անոնք ամէնքն ալ պիտի փութան հասնիլ ի Մայրն Հայաստան, երբ դաշնակից տէրութեանց Վեհաժողը պաշտօնական կերպով մ'ալ բոլորովին անկախ ճանչնայ զանի և յայտարարէ ի լուր աշխարհի, այլ և՛ օգնէ մանաւանդ զօրքով և ռազմամթերքով գրաւելու վեց նահանգներն և Կիլիկիան։ Բուլգարիայէն, Ռումէնիայէն, Հունգարիայէն, Եգիպտոսէն և Ամերիկայէն արդէն իսկ սկսած է ներգաղթը դէպ ի անցկացեալ մեր բնաշխարհը. և հաւանօրէն թերևս մեծամեծ չափեր եւս առած էր այսօր, եթէ անանցանելի թումբեր և խոչընդոտներ կանգնած չըլլային անոր առջև թէ՛ մեր արիւնռուշտ թշնամիներէն և թէ՛ մեզ պաշտպանող անգղ և ֆրանս զինուորական հրամանատարութեանց կողմէն։ Մաղթենք որ շուտով որոշուի անկախ Հայաստանի վերակազմութեանը հոգ տանող կամ Յանձնակատար տէրութիւնն, ըլլայ այն Ամերիկայի Միաց. տէրութիւնը, ըլլայ Ֆրանսա կամ Իտալիա, և տիրէ կենաց կատարեալ ապահովութիւն։ Այն օրէն, անտարակոյս, ոչ միայն ի Կովկաս ապաւինած 350,000–400,000 տաճկահայ գաղթականութիւնն ամբողջ, և Կովկասում խռնուած և խճողուած ազգաբնակութեանց ալ շատերը, — առատ հողեր և գործ ունենալու տենչով, — այլ և վերոյիշեալ երկիրներում պանդխտող և այժմ սաստիկ հայրենաբաղձութենէ բռնուած ժողովուրդներն ամենուստ հոն պիտի վազեն գունդագունդ, օր մ'առաջ հայրենեաց կենսաբեր օդը ծծելու, հայրենաւանդ յիշատակներուն փարելու և իբր ազատ ազգ՝ ապրելու և զարգանալու գերազանց նպատակով։

Գալով մեր ներկայացուցած այս վիճակագրական տուեալներուն՝ թէև մաթեմատիկական ճշդութեամբ եղած չեն և չեն ալ կրնար ըլլալ, բայց պատմական ստոյգ եղելութիւն է, որուն պարտին թէ՛ Պարիզի հանրազգային Վեհաժողովի լիազօրներն և թէ՛ անկէ քննութեան համար ղրկուելիք գործակատարները լաւ ուշ դնել, օսմանեան տէրութեան ծուղակին մէջ չիյնկնալու համար, որ սովորեալ է իր պետութեան մէջ մահմետականութիւն դաւանող և թրքախօս բոլոր ազգերը՝ իբրև թիւրք ներկայացնել, նկատելով չարամտաբար օսմանցիութիւն և մահմետականութիւն յարանուանութիւնքն՝ իբր հոմանիշ և համազօր թիւրք ազգայնութեան. մինչդեռ այդ անուններէն առաջինը՝ Օսմանէն ածանցեալ է և սոսկապէս տէրութենական, իսկ երկրորդը Մէհմէտէն և լոկ կրօնական. այնպէս որ մոնգոլ կամ սկիւթացի թուրքն անգամ մահմէտականութիւնն ընդունելէն յառաջ չունէր այդ վերադիրները։ Այս առանց երկբայութեան է։ Վասն զի Օսմ. Տէրութեան պաշտօնական վիճակագրութիւնք մինչև ցայսօր այսպիսի մոլար և մոլորեցնող հիման վրայ կատարուած են. որով բոլոր եւրոպացի ճանապարհորդք և վիճակագրողք իսկ մինչև... Կինէ՝ սխալած են իրենց հաշիւներուն մէջ։ Այսօր միայն, այսինքն Դաշնակիցներէն այդ չարախտավար տէրութեան դիւանական յիշատակարանները գրաւուելէն ետքը, խարդախանքը յայտնուեցաւ. որուն համար ալ բանիբուն քննախոյզք բոլորովին կեղծեալ և իբր ոչինչ կը յայտարարեն Թիւրքիոյ ժողովրդոց, մանաւանդ Հայոց մասին եղած նախկին վիճակագրութիւնները։ Բաւականաչափ թրքացած և քրդացեալ Հայերու գոյութիւնը շեշտած է նաև Ֆէրիտ Փաշայ, — եթէ չեմ սխալիր, — Վէրսայլի Վեհաժողովին ներկայացուցած վերջին ծանօթագրութեան մէջ, ծածկելով սակայն անոնց որքանութիւնը։

Ուրեմն ի նպաստ Հայաստանի անկախութեան մատուցած այս աւելեալ վիճակագրութեանս, որ աւելի նուազ է իրականէն՝ քան թէ չափազանցուած, առանց ինչ խորշումի կամ զգացական հակակրու-

© National Library of Armenia

թեան ոչ միայն կարևորութիւն տալու են նաև մեր Ազգային Պատուիրակութիւնն և Հասարակապետութիւնը, այլ և ուշի ուշով հսկելու, վասն զի ասով միայն թուրքի նենգաւոր հաշիւները յօդը պիտի ցնդին և ափիբերան պիտի լինին Հայոց անկախութեան հակառակորդները։

Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԵՌԱԳՈՒՆԵԱՆ ԳՐՈՇԱԿԻՆ

(Ժողովրդական քայլերգիկ)

Դրոշակներու էն գեղանին,
Էն գեղանին դրոշակներու,
Եռագունեանն է ծիրանին,
Խրախոյս կուուի և յաղթելու։
Քեզ կը սիրենք, Եռագունեա՜ն,
Երփներանգ ճոխ և անուշակ.
Իմաստն ես դուն ԱԶԱՏՈՒԹԵԱՆ,
ՀԱՒՍԱՐ ԿԵԱՆՔԻ նշան գուշակ,
ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆ կապ հաստատուր...
Քեզ կը սիրենք, Եռագունեա՜ն,
Ո՛վ դրոշակ ձայն քաղցրալուր՝
Բոց և Ոգի Ազատութեան...
Ազատութիւն, Ազատութիւն,
Դուն մեզ իշխէ, դուն միայն դուն,
Հաւասարութիւն՝
Եղբայրութիւն՝
Ազատութիւն,
Ո՛վ Եռագոյն՝
Իշխէ մեզ դուն,
Դուն միայն դուն,
Ազատութիւն–Հաւասարութիւն–Եղբայրութիւն,
Ո՛վ նիշ սիրուն, դրոշակ խօսուն, պերճ Եռագոյն,
Իշխէ մեզ դուն,
Իշխէ մեզ դուն։

Հ. Գ. Ա.

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ ԸՍՏ Շ. ՀԱՅԿԱԶ

(Տես Բազմավէպ էջ 23–1919)

Բ. Փարաւոնք, Մովսեսի Ժամանակները.

Ինչպէս որ Յովսեփայ ժամանակի Փարաւոնը կամ Փարաւոնները ստուգեցինք իրենց ներքին նշաններով, այսպէս ալ Մովսիսի ժամանակակից Փարաւոնները ջանանք ստուգել, թէև արձանագրութիւնք նշանակած չեն այն մեծ դէպքը՝ որ ժողովուրդ մ՝ ամբողջ Եգիպտոսէն կը հեռանայ։ Սակայն թէ՛ Մովսիսի ծննդեան ժամանակի Փարաւոնը, և թէ՛ անոր Եգիպտոսէն Իսրայելացիները հանելու ժամանակի Փարաւոնը ունին որոշ նշաններ՝ որ յայտնի կ՝ընեն թէ ասոնք իրարու հետ առնչութեան մէջ էին։

Ըսինք թէ բազմաստուածեանները կռիւ մղեցին ընդդէմ միաստուածեաններուն. և արդարև, այս այնքան յայտնի է որ մինչև իսկ Արեգացւոց մայրաքաղաքը կործանած են. վասն զի եթէ կործանած չըլլային բազմաստուածեանները Արեգ քաղաքը, ինչո՞ւ Փարաւոն՝ որ ըստ Ելից, «Ոչ գիտէր զՅովսէփ», շինել կուտայ դարձեալ Արեգ քաղաքը. «Եւ շինեցին քաղաքս ամուրս Փարաւոնի զՓիթոն, և զՌամեսէ, և զՈՆ՝ որ է Արեգ» Ելք. Ա. 11. բայց դիտելի է որ վերջի քաղաքն Ովն որ է Արեգ է ըստ Եօթանասնից. զի Եբրայականի և Վուլկատայի մէջ յիշատակութիւն չկայ, վասն զի ոչ թէ նոր քաղաք շինուեցաւ Ովն՝ որ է Արեգ իր առաջուան պէս պաշտման քաղաք, այլ այս անգամ նորոգուեցաւ և բերդաքաղաք շինուեցաւ ինչպէս Փիթոն և Ռամեսես։

Սակայն որքան միաստուածեանները կորուսին իրենց իշխանութիւնին, այսու հանդերձ անոնց կուսակիցները կ՝աճէին, Իսրայելացիները, այն աստիճանի՝ որ Եգիպտացիներէն, այսինքն բազմաստուածեաններէն աւելի կը զօրանային. «Եկաց

© National Library of Armenia